ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/5.1.1-25
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1** ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ |
| Ս.Հովհաննիսյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ |
| Դ.Կարապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ |
| Ա.Բաբայան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ |
| Լ.Բասմաջյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Ա.Ոսկանյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Ջ.Հայրապետյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |
| Ծ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

***Լսեցին՝***

Տեղեկատվություն՝ 2025 թվականի մայիսի 20-ին կայացած նիստի N3/5.1.1-25 արձանագրությամբ՝ **«Ուլթսորս» ՍՊԸ-ի** հետ պայմանագրի կնքման վերաբերյալ:

***Հաշվի առնելով***

Կոմիտեի կողմից Միջոցառման անցկացման ժամկետների հստակեցումը, Հանձնաժողովի առաջարկների իրականացումն ապահովելու նպատակով Կազմակերպության հետ համագործակցությամբ

Նախահաշվում և Պայմանագրի անբաժանելի մասը կազմող նախահաշվում համապատասխան փոփոխությունների կատարումը և մյուս հավելվածներում համապատասխան տեղեկատվության լրացումը, առաջարկվեց Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1** ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության՝ **«Աութսորս» ՍՊԸ**-ի հետ կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր:

***Կայացավ քննարկում, որի արդյունքում***
***Հանձնաժողովը միաձայն որոշեց՝***

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1** ենթամիջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված՝

- «Աութսորս» **ՍՊԸ-ի** հետ՝ **75,400,000** (յոթանասունհինգ միլիոն չորս հարյուր հազար) (այդ թվում՝ 12,566,667 (տասներկու միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

| | | |
|---|---|---|
| Ա.Մկրտչյան<br>(Հանձնաժողովի նախագահ) | - | ____________ |
| Ս.Հովհաննիսյան | - | ____________ |
| Դ.Կարապետյան | - | ____________ |
| Ա.Բաբայան | - | ____________ |
| Լ.Բասմաջյան | - | ____________ |
| Ա.Ոսկանյան | - | ____________ |
| Ջ.Հայրապետյան | - | ____________ |
| Շ.Հովսեփյան | - | ____________ |